Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
487

ՄԻ ԶՐՈՅՑ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅԻ ՀԵՏ։

(միջին և հասարակ դասի համար)

Ս. Գադեանց։

МОСКВА.
Типографія быв. А. В. Кудрявцевой, Мясницкая, д. Сытова.
1880

1959
ԼԵՈ
487

ՄԻ ԶՐՈՅՑ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՒ ՀԵՏ։

(Միջին և հասարակ դասի համար)

2097.

Ս. Դագեաանց։

МОСКВА.
Типографія быв. А. В. Кудрявцевой. Мясницкая, д. Сытова.
1880

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 15 Октября 1880 г.

4487-ИО

2Ք 488

(Նուէր Պ. Գրիգոր Արծրունուն)

Լսիր հայ մարդ, իմ արիւնակից եղբայր! Ես ուզում եմ քեզ հետ մի շատ թեթև ու հասկանալի զրոյց անեմ մի այնպիսի բանի վրա, որ վերջին ժամանակը գրելու ու խօսելու առարկա է դառել մեր մէջ: Բանը շատ պարզ է, և ես յոյս ունեմ, որ դու այնքան համբերութիւն կունենաս, որ կը լսես ինձ և կարողութեանդ չափ քո սրտի մէջ կը վճռես թէ՝ ինչն է ուղիղ, ինչը սխալ, ով է ճշմարտութիւն պաշտպանում, ով մոլորութիւն: Համառօտ, ազնիւ բարեկամ, աղաչում եմ քեզ հաւատա, որ ես՝ ինչպէս հայ և քեզ հետ արիւնակից, քո լաւն եմ ցանկանում, քո ցաւովը ցաւում, քո դառը լացի հետ լաց լինում, քո քաղցր ուրախութեան հետ ուրախանում: Ինչ որ այս տեղ գրեմ, ինչ որ ասեմ քեզ,—բոլորը քո օգտի համար է. երբ որ այս գրածս կարդաս, դու ինքդ կը հասկանաս, որ ուղիղ եմ ասում: Դէ՛ ուրեմն մի կէս ժամ ինձ բաշխի ու ծառայիդ խօսքերը լսի: Քեզ, ինչ կարծիք, յայտնի է, որ մեր հայ ազգի մէջ բա-

ցի մեզանցից՝ այսինքն լուսաւորչականներից կան նոյնպէս կաթոլիկ ու աւետարանական հայեր։ Դա չեմ ուզում քո գլուխը ցաւացնեմ ու երկար ու բարակ մեկ մեկ այստեղ ցոյց տամ, թէ ինչ զանազանութիւն կայ մեր և նրանց հաւատի մէջ. բաւական է միայն ասել, որ նրանք էլ մեզ պէս հայ-քրիստոնեք են, բայց մեր եկեղեցին չեն դալիս, այլ իրանց համար առանձին եկեղեցիք ու առանձին քահանաներ ունեն։ Նրանք էլ մեզ պէս ժամերգութիւն ունեն, նրանք էլ մեզ պէս փառաբանում են Ամենակարող Արարչին, և արդարադատ Աստուածը ընդունում է նոյնպէս նրանց ջերմեռանդ աղօթքը ու հաւատար կերպով բաժանում է իր գթառատ ողորմութիւնը ինչպէս մեզ, նոյնպէս և նրանց։ Երկնային Տիրոջ գիրքը բաց է ամեն մի քրիստոնէի համար, ով որ լինում է լինի՝ լուսաւորչական, աւետարանական, ուղղափառ, կաթոլիկ,—բոլորը Նրա առաջ հաւասար են. թող միայն մարդ ճշմարիտ քրիստոնեայ լինի, թող նա ուղիղ սրտով ու խղճմտանքով կատարի Սուրբ Աւետարանի կանոնները, և Աստուծոյ աչքը միշտ նրա վրա քաղցր կը լինի։ Այս ճշմարտութիւնը այնքան պարզ է, ոլքան արեգակի լոյսը։ Սրանից երևում է, որ մեր հայ-կաթոլիկ ու հայ-աւետարանական եղբայրները, թէև մեր եկեղեցուց բաժանուել են, բայց էլի մնացել են քրիստոնեայ և Քրիստոսին ճշմարիտ Աստուած ճանաչելով զուրկ չեն մնայ երկնային կեանքի վայելչութիւններից։ Մենք չը պէտք հիմա նատենք ու ծանր ու բարակ քննենք ու հարցնենք, թէ ինչու են նրանք մեր եկեղեցու ծոցիցը դուրս եկել՝—հիմա

բանը եղել է, անցել կացել. դրա համար գլուխ ցաւացնելը աժի ոչ։ Լաւն այն է մի ուրիշ հարց առաջ բերենք ու աշխատենք ինչքան կարող ենք խրճմտանքով ու հալալութիւնով քննենք։

Կան մեր մէջ այնպիսի մարդիկ, որոնք ասում են, թէ հայ-կաթոլիկ ու հայ-աւետարանականները, որովհետև մեր լուսաւորչական եկեղեցուց բաժանուել են, մեզ համար կորած են ու թուրքից կամ նասրանուց աւելի զզուելի պէտք համարուին մեզ համար։ Նրանց խելքով լուսաւորչական հայերն են մենակ հայ և այս պատճառով նրանք պէտք արմնկեր թշնամու պէս մոիկ տան կաթոլիկ ու աւետարանական հայերի վրա, պէտք նրանց հետ ոչ մի ազգային գործ չբռնեն, պէտք նրանց տանն, ցիսի հետ հաւասարացնեն, իրանց միջից դուրս անեն, մի խօսքով հարար մի անէծք ու թուք ու մուր վրնները ածեն։ Կան և այնպիսի մարդիկ, որոնք բոլորովին սրանց հակառակն են ասում, և այդպիսիների թիւը հազար անգամ շատ է։ Սրանք ասում են, թէ կաթոլիկ ու աւետարանական հայերը, թէև մեր եկեղեցուն չեն պատկանում, բայց էլի մեզ համար օտար չեն, էլի մեր եղբայրներն են, մենք նրանց չը պէտք ատենք, նրանցից չը պէտք հեռանանք, խորթանանք, որովհետև նրանք էլ մեր ազգն ու արիւնն են, նրանք էլ մեզ պէս հայ են, հայերէն լեզուով խօսում, հայ անունը պաշտում։ Հիմա ի՞նչպէս կարծում, սիրելի բարեկամ, քո խելքով, քո բանականութիւնով սրանցից որն է լաւ ասում, ո՞ւմ խօսքերի մէջ աւելի խղճմտանք, աւելի մարդասիրութիւն կայ։ Մենք պէտք դուրս գցենք

մեր միջից մեր ազգակից հայ-կաթոլիկներին ու հայւետարանականների՞ն, թէ ընդհակառակը պէտք է աշխատենք բարիշել, մօտիկանալ ու բարեկամանալ նրանց հետ: Ի՞նչպէս է քո կարծիքը:

Որ քեզ համար աւելի հեշտ լինի այդ հարցին պատասխան տալը, ես այստեղ կաշխատեմ մի քանի խօսքով ցոյց տալ քեզ, թէ ինչ վիճակի մէջ է հիմա մեր խեղճ հայ ազգը: Դու, ի հարկէ, անպատճառ լսած կը լինես, որ մենք մի ժամանակ բաւական մեծ ազգ ենք եղել, ունեցել ենք թագաւորութիւն, ունեցել ենք լաւ, երեւելի անուն, բայց անմիաբանութիւնով, մեկ մեկու միս ուտելով, մեկ մեկու առաջի փոս փորելով այն աւրն ենք հասել, որ կորցրել ենք համ անուն, համ փառք ու պատիւ և դէս ու դէն ցիր ու ցան լինելով ընկել ենք զանազան ուժեղ ազգերի ձեռքի տակ, Քո մտքից դեռ չը պէտք է գնացած լինեն այն չարչարանքները, այն տանջանքները, որ մենք քաշել ենք անիրաւ պարսիկների ձեռքին. Թէ ինչքան աղէ արտասունք են թափել տուել մեզ, ինչքան գլուխներ է սոխի պէս թռցրել անօրէն պարսկի թուրը, — այդ քեզ լաւ յայտնի է, Մեր խեղճ ազգը այդ անտանելի տանջանքներից ազատուեց միայն այն ժամանակը, երբ Աստուծոյ բաղցր խնամքով Ռուսաց Ողորմած Թագաւորը քաշեց տարաւ մեզ իր ձեռքի տակ: Հիմա փառք Արարչին մենք հոգով էլ, մարմնով էլ հանգիստ ենք, մեր կայքը շատ ու գլխի փայ չի գտնւում, մեր աղջիկերանցը չեն դուրս քաշում մօր խառիցը ու խաների հարեմխանեքումը հալում ու մաշում, մեր սուրբ եկեղեցին ազատուել է լիրբ պարսիկներին

ծիծաղասեղ դառնալուց: Մի խօսքով մենք հանգիստ, ականջներս դինջ ապրում ենք, առաջ գնում, լուսաւորւում ու փառք տալիս Աստուծուն Իր ողորմութեան համար: Բայց դու չը պէտք է մոռանաս, ազնիւ բարեկամ, որ այդ հանգստութիւնը վայելում է ոչ թէ բոլոր հայ ազգը, այլ նրա փոքր մասը, կիսի կէսը մենակ: Տաճկաստանցի ողորմելի հայերի կեանքը խօ կեանք չէ, պատիժ է: Պարսիկների ձեռքին քաշած մեր նեղութիւնները դրա առաջ ողորմութիւն է: Եթէ որ մեկ մեկ այստեղ գրելու լինեմ այն դժոխքի տանջանքները, որ քաշում են մեր անբաղդ, խեղճ եղբայրները, — մազերդ գլխիդ բիզ բիզ կը լինի: Բաւական է միայն որ ասեմ, թէ օր չի լինում որ անիրաւ թուրքը արինկեր քրդի հետ խեղճ հայ գիւղացու տաւարը չը քշեն, տունը կրակ չը տան, օր չի անցկենում որ քնքուշ հայ աղջկերանցը, մեր խեղճ քոյրերին դուրս չը քշեն հօրն ու մօր մօտից ու զանազան չը բռնաբարեն, օր չի անցկենում, որ մեր սուրբ վանքերը չը թալանեն ու իրանց կեխտոտ ոտներով չարականեն, օր չի անցկենում, որ ծեր ողորմելի քահանաներին չը ծեծեն ու Ակնի շէնքից կախուած շան հետ միասին չը կապեն, օր չի անցկենում որ ողորմելի գիւղացիներին կրակի մէջ կարմրացրած շամփուրներով չը դաղեն ու դեռ ուրախութիւնից չը կչկչան նրանց լացն ու գոռոցը լսելիս.... Ախար այս ի՞նչ կեանք է! Մեռնելը դրանից հազար փառքով լաւ չէ՞...

Շատ էին համբերում մեր Տաճկաստանցի խեղճ եղբայրները ու շլնքները ծռած գլուխները դէմ էին

անում քրդի թրին կամ թուրքի բռնցքին. բայց վերջապես համբերութիւնները հատաւ՝ դանակը ոսկոռին հասաւ... „Տո՛, գլխներիս խօ լաչակ չի, ինչ ենք իշի պէս համբերում“ մտածեցին վերջապէս մեր եղբայրները և մտքներումը դրին թուր ու թուանք առնել ձեռքները և կռիւ տալով պաշտպանել իրանց: Մտածին ու կատարին մեկ եղաւ: Ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն ու հայերէն լրագիրները բոլորն էլ յայտնում են, որ Հայաստանումը ղօչաղ հայերը թօփուն թօփուն եղած կրակի կտոր Պապիկ իշխանի ձեռքի տակ ահ ու դող են քցել քրդերի սիրտը. 7 քրդի գեղեր նրանք արդէն քար ու քանդ են արել: Հիմա կռուի տաք ժամանակն է: Երկու կողմից էլ ինչ կարծիք որ կոտորած կը լինի: Հայերից արդէն 70 հոգի վերաւորուած են (եարալու են եղած): Արանից երևեւում է, որ մեր տաճկաստանցի հայ եղբայրները օգնութեան անչափ կարօտութիւն ունեն: Մի կողմից քրդերի հետ կռիւը շարունակւում է՝ նրանց հարկաւոր են զէնքեր, թուր, թուանք, բարութ, ուտելեղենների պաշար, վերաւորուածներին դեղ ու դարման, իսկ միւս կողմից սարսափելի սովը շարունակում է իր կոտորածը: Դեղ ի հարկէ, յայտնի է, սիրելի կարդացող, թէ անցեալ տարի սովը ինչպէս հալ ու մաշ արեց առանց էն էլ աղքատացած, թալանուած, ողորմելի հայերին: Օր չէր անցկենում, որ սովից չը մեռնէին թուլացած ծերունիքը, երեխէքը, կնանիքը՝ բաղերումը էլ խոտ ու քօք չը մնաց որ թշուառ սովատանջները չուտէին: Ամեն կողմից օգնութիւն էին հասցնում խեղճերին, բացի Տաճկաց

անսիրտ, անօրէն տերութիւնից՝ որ ընդհակառակը ամենից առաջ պէտք է օգնէր իր հպատակ սովալլուկներին. Ֆրանսիացիք, Գերմանացիք, Անգլիացիք, Ռուսներ, Յոյներ, Վրացիք, Հրէաներ բոլորն էլ օգնութեան ձեռք էին մեկնում: Մեր ողորմած թագաւորն էլ խղճաց ողորմելիների վրա ու մի մեծ գումար բաշխեց. նրա օրինակին հետևեցին նոյնպէս Ավստրիացւոց Կայսրը, Անգլիայի թագուհին, Յունաց թագաւորը, Բելգիայի թագաւորը, Բօլգարների Իշխանը, Սերբերի Իշխանը և Հռոմի Փափը: Ռուսաստանցի հայերը 60 հազար մանեթից աւելի ուղարկեցին: „Մշակ“ լրագիրը մօտ 40 հազար մանեթ մենակ ուղարկեց Տաճկաստանի սովատանջների համար: Դու էլ սիրելի կարդացող, քո կարողութեան չափ մի բան բաշխած կը լինես ու դրամով գոնէ մի խեղճ գառնուկ երեխայ սովի ճանգին թռչուտալիս մահից ազատած կը լինես... Դու չը կարծես թէ սովը վերջացել է. ոչ՝ նա շարունակւում է: Ո՞նց պէտք է օգնեն մեր խեղճ նահատակները, ի՞նչ պէտք անեն նրանք, որ կարողանան համ անօրէն քրդի հետ կռիւ տան, համ ուտելու գոնէ ցամաք չոր հաց գտնեն,— այդ Աստուծուն է միայն յայտնի: Անսիրտ տաճկաց տերութիւնը, փոխանակ օգնելու իր խեղճ հպատակ հայերին, ընդհակառակը լրբարար թէ փողով, թէ հացով, թէ մարդով օգնում է քրդերին, սիրտ տալիս և հրամայում, որ ջարդեն հայերին, թալանեն, սովամահ անեն, որ Տաճկաստանի միջից հայ անունը վերանայ, ջնջուի... Էլ ի՞նչ հողը տան իրանց գլխին անբաղդ հայերը. ի՞նչ է, նատեն լաց լինեն,

սրան նման երեխու պէս գանգատ անեն կամ քրդերի ոտքերը արտասուքով թրջե՞ն... Այդ խօ կատարեալ յիմարութիւն կը լինի... Եթէ Տաճկաստանցի հա-յերը իրանք իրանց չը պաշտպանեն, մէկ մէկու չօգնեն, մէկ մէկու սիրտ չը տան, կորած են ու կորած: Այդ ծծկեր երեխան էլ կասի քեզ:

Հիմա քեզ եմ հարցնում, հայ մարդ, իմ անգին բարեկամ, մի այսպիսի դժուար ժամանակ, երբ „հայ" անունը կրելը վտանգ է, մի՞թէ լաւ կը լինի որ Տա-ճկաստանցի հայերը շարունակեն իրանց կրօնական վէճերը, մի՞թէ խելքութիւն կը լինի, որ լուսաւոր-չականները մենակ իրանց հայ համարեն ու կոպտու-թիւնով չընդունեն իրանց կաթօլիկ ու աւետարանա-կան եղբայրների սիրով առաջարկած օգնութիւնը... Ախր դրանք բոլորն էլ հայ են, հասկացէք, մի ազգ են, մի միս ու արիւն են, դրանց բոլորին էլ ջարդում են, խեղդում են, սովամահ են անում, — ախր Աստուած վեր կունի, որ դրանք փոխանակ մէկ մէկու օգնելու, մէկ մէկու ձեռք տալու ու միաբան իրանց արինկեր թշնամու առաջ դուրս գալու, նստեն ու քաֆթառ-պառաւների պէս իրար բամբասեն, իրար ուշունց տան, իրար աչք ու երես պոկե՞ն... Ախր հայը հայից խօրթանա՞յ, հայը հայի միս ուտի՞ — այդ ի՞նչ երկինքի պատիժ է, այդ ո՞վ է տեսել, այդ ի՞նչ երեխայութիւն է... Համ քուրդը ջարդի հայերին, համ քուրդը տանի հային, համ հայը իր արիւնակից հային տանի... Լաւ կը շինուի դրանով հայի տունը! Հասկացէք, որ թուրքը և քուրդը ոչ թէ (միայն) հայ—լուսաւորչականների, կամ կաթօլիկ ու աւետա-

րանականների արինկեր թշնամին են, — նրանք առհա-սարակ հ ա յ ի թշնամին են, այդ անունն է նրանց աչքը ծակում. լուսաւորչական, աւետարանական և կաթօ-լիկ անունները նրանց համար դատարկ ձայներ են՝ ով որ հայ է, նա նրանց թշնամին է: Ուրեմն Տաճկա-ստանցի բոլոր հայերը, ինչ հաւատի որ լինեն նրանք, պէտք է ճանաչեն իրանց թշնամուն, պէտք է հասկա-նան, որ իրանք բոլորը խեղճ հայ ազգի զաւակներն են, պէտք է հասկանան որ իրանց ազգը սաստիկ նեղու-թեան մէջ է և ձեռք ձեռքի տուած, մոռանալով իրանց անտեղի կրօնական վէճերը. պէտք է պաշտ-պանեն ազգի անունը և պատիւը...

Բաղդաւորապէս Տաճկաստանցի հայերը սկսել են այդ հասկանալ: Նրանց յոյս ու ապաւէն Ներսէս պատրիարքը, մեր հոգևորականների փառք ու պար-ծանքը, ինքը աշխատում է կամաց կամաց մօտիկանալ կաթօլիկ և աւետարանական հայերի գլխաւոր հոգևո-րականների հետ, որ դրանով բարի օրինակ լինի իր ժողովրդին: Ինչ կարծիք, որ լուսաւորչական հայերը օրինակ կառնեն իրանց սիրելի և մեր բոլորիս պաշտելի պատրիարքից և նոյնպէս կաշխատեն բարեկամութիւն կապել իրանց կաթօլիկ և բողոքական ազգակից եղբայր-ների հետ: Եթէ այդ այդպէս լինի, եթէ լուսաւոր-չական, կաթօլիկ ու բողոքական հայերը սիրով լինեն, մէկ տեղ աշխատեն, մէկ տեղ գործ կատարեն, մէկ տեղ իրանց ազգի անթիւ ու անհամար հոգսերը քա-շեն, ինչ ասել կուզի որ Եւրօպայի մեծ տէրութիւն-ները, որոնք ուզում են Տաճկաստանի հպատակ քրի-ստոնեայ ազգերի դրութիւնը լաւացնել, հայերի վրա

այն ժամանակը լաւ աչքով մոռիկ կը տան, կասեն որ միաբանութիւն սիրող ազգեն և այնքան լուսաւորուած են, որ կարող են լաւ կառավարուել, եթէ տիպենք Տաճկաստանին նրանց մի քանի իրաւունքներ տալու: Ներսէս պատրիարքը իր ժողովրդի հետ այդ շատ լաւ է հասկանում և այս պատճառով աշխատում է բարեկամութիւն կապել կաթոլիկ և բողոքական հայերի հետ: Ամբուրեմ նրա սուրբ աջը! Այ ազգը երբէք չի մոռանայ նրա այդ բարի գործը ...

Իմա զբաղ դնենք մեր տաճկաստանցի եղբայրներին և գանք խօսենք մեզ վրա: Ի՞նչ ես կարծում, մի՞թէ մենք չը պէտք է օրինակ վերցնենք նրանցից, մի՞թէ մենք պէտք է շարունակենք ատել, արհամարհել մեր կաթոլիկ ու աւետարանական հայ եղբայրներին, — ո՛չ՝ — այդ մի անշնորք կոպտութիւն կը լինի մեր կողմից: Ախար ինչո՞ւ պէտք է ատենք: Նրանք ճշմարիտ հայեր են, հայ ազգը սիրում, հայոց մաքուր լեզուն սովորում ու գործ ածում, մեր խեղճ ազգի ցաւերով ցաւում, — ինչո՞ւ պէտք է մենք նրանց արհամարհենք: Նրանք ցանկանում են մեզ հետ մօտանալ, բարեկամանալ, նրանք մոռանում են, ներում են այն բոլոր կեխտերը, արհամարհանքները ու անիծքները, որ մենք չը գիտեմ ինչ իրաւունքով թափում էինք խեղճերի գլխին, — հիմա հարցնում եմ, ի՞նչ մարդութիւն կը լինի մեր կողմից, եթէ կողքներս ընկենք ու առաջուայ պէս շարունակենք անմիտ կերպով ծիծաղալ նրանց վրա, ծաղրել, մասխարա դցել ... Երբէք է ինչքան մասխարա գցեցինք, հերիքէ ինչքան աւելի անուններ կպցրինք, հերիքէ ինչքան

մէյդաններումը ծեծեցինք, ջարդեցինք, — հերիքէ, հաւեներս հանեցինք:

Խնդրենք գլխներս ժողովենք: Եթէ աշխարհում արդարութիւն կայ, յանուն այդ արդարութեան մենք պէտք է մարդկօրէն վարուենք մեր ազգակից եղբայրների հետ: Քրիստոսի սուրբ Աւետարանը հրամայում մեզ ներել մինչև անգամ մեր թշնամիներին, իսկ մենք, որ Քրիստոսի աշակերտներն ենք, ոչ միայն չենք նեղում մեր արիւնակից եղբայրներին, որոնք երբէք մեզ թշնամի չեն եղել, այլ դեռ ամեն կերպ աշխատում ենք ցիսի հետ հաւասարացնել նրանց, անդունդ խորտակել խեղճերին ... Ո՞յդ է միթէ հրամայում Աւետարանը — ո՛չ՝ — նա հրամայում է՝ սէր և ներողամտութիւն: Մեր տունը հենց սկզբից անմիաբանութիւնը ու նախանձը քանդեց. գոնէ անցկացածից օրինակ վեր առնենք:

Ինչ լուսաւորուած ազգ որ ուզումես վերցրու՝ Ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, ամերիկացի, — և դու կը տեսնես, որ նրանց մէջ ազգը ուրիշ բան է, եկեղեցին ուրիշ: Մի և նոյն ազգի մէջ, օրինակ Ֆրանսիացիների մէջ, կան համ կաթոլիկներ, համ բողոքականներ, համ կայրվինականներ, համ մորմոններ, բայց ոչ մի ժամանակ նրանց մէջ կռիւ, զաղմաղալ չես տեսնի. թէև նրանք զանազան հաւատ ունեն, բայց այնպէս սիրով են, ինչ որ հալալ եղբայրներ, որովհետև բոլորն էլ Ֆրանսիացիք են, մի արիւն են, մի ազգի զաւակներ են: Նրանց համար միևնոյնէ՝ մարդ ինչ տեսակ որ ուզում է, թող պաշտի Աստուծուն, միայն անունը Ֆրանսիացի լինի, Ֆրանսերէն խօսա,

Տրանսիական տերութիւնը սիրի, և նա նրանց աչքի լոյսն է։ Այսպէս էլ ուրիշ ազգերի մէջ է։ Հիմա այս սաղ աշխարքումը հէնց մե՞նք են դուս եկել կռուարար ու ամբարիշտ։ Ի՞նչ եղաւ մեզ։ Մենք էլ նրանց պէս մարդիկ չէ՞նք։ Ամեն բանում նրանցից օրինակ ենք վերցնում, ինչո՞ւ սրանում էլ չենք կարող։ Եթէ ուզում ենք, որ ուրիշ ազգերի առաջ ծիծաղատեղ չը դառնանք ու ազէա, խաւար անունը չը ստանանք, եթէ չենք ցանկանում որ հայ ազգը կամաց կամաց փոքրանայ, պակասի, մենք պէտք է բոլորովին ձեռք վեր առնենք անտեղի կրօնական երկպառակութիւններից և ամեն կերպ աշխատենք, որ աշխարհիս բոլոր հայերը, ինչ հաւատի որ լինեն, սիրեն, պատուեն, յարգեն և օգնեն մեկ մեկու, ինչպէս որ կը վայելի մի ազգի հարազատ զաւակներին, արիւնակից եղբայրներին։ Հաւատացէք որ հաւատը զօրի բան չէ. չէ կարելի մարդու եախիցը բռնել ու շինքաքօքին ծեփելով ասել՝ սրան պաշտի, նրան մի պաշտի։ Հաւատը մարդի խղճմտանքի բան է, իսկ խղճմտանքի վրա հարը ու զօրը բանացնիլը առաջինը մեղք, երկրորդը անօգուտ բան է։ Մեզ մարդ է հարկաւոր, հայ է հարկաւոր—ուրիշ ոչինչ։

Դա վերջացնում եմ իմ խօսքը և շատ կը ցանկայի իմանալ սիրելի բարեկամ, թէ կընդունես իմ բարի խորհուրդը թէ չէ։ Ո՞վ գիտէ կարելի է զրածս կարդաս թէ չէ, գլուխդ շարժես ու քթիդ տակ ծիծաղելով ասես քեզ ու քեզ՝ „աւ, էս մի հոգևորը „Ֆարմասիօն“ չը լի՞նի“... Հաւատացնում եմ իմ քեզ, պատուելի ազգակից, որ ստատիկ կը սխալուես, եթէ

այդպէս կարծես։ Դա ինքս քեզ պէս հայ-լուսաւորչական եմ և մինչև մահս կը մնամ Ս. Գրիգորի Աթոռի պաշտողը։ Դա քեզ չեմ ուզում բողոքական դառնել,—այդպէս կարող է կարծել միայն այն մարդը, որի գլուխում ուղեղի տեղ լօրախաշու է ածած։ Իմ խնդիրքը, իմ աղաչանքը այն է, որ դու վերջապէս հասկանաս, որ կաթոլիկ ու աւետարանական հայերը մեր միս ու արիւնն են, մեր հարազատ եղբայրներն են։ Բոլորս էլ հայ ենք։ Մեր ցաւերը, մեր դարդերը, մեր ուրախութիւնները միևնոյնն են։ Մեր մտաը կարուի նրանցը պէտք է ցաւի, նրանցը կարուի մերը պէտք է ցաւի։ Մեր ազգի դարդերը շատ են։ Տաճկաստանցի հայերը թշուառ դրութեան մէջ են, իսկ մենք բաղդաւորութեան մէջ։ Թողնենք ուրեմն մեր կրօնական վէճերը և սիրտ սրտի տուած աշխատենք մեր կարողութեան չափ օգնութիւն հասցնել խեղճ ողորմելիներին... Տե՛ր ուրեմն քո ձեռքը, լուսաւորչական հայ, քո արիւնակից աւետարանական կամ կաթոլիկ եղբօրդ, գրգիր նրան, համբուրիր նրան, ասա՝ ես հայ եմ, դու էլ հայ ես, ուրեմն եղբայր ենք, որի հաշտուենք,— և հաւատայ, անգին բարեկամ, որ այդ հաշտութիւնը, այդ միութիւնը կը լինի մեր թշուառ ազգի բարօրութեան հիմքը...

ՀՀ Ազգային գրադարան
NL0248513

Գինն է 10 կոպ.